ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

ՊԵՏՔ Է ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ Հայաստանի դիրքերը

Հարցազրույց ՀՀ նախկին արտգործնախարար Վահան Փափազյանի հետ:

Անուշ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
anush@hraparak.am

- Պարոն Փափազյան, հունիսի 7-ին Սերժ Սարգսյանն առաջին անգամ կհանդիպի Իլհամ Ալիեւին: Ի՞նչ խորհուրդ կտաք Սերժ Սարգսյանին:

- Սերժ Սարգսյանը խորհրդի կարիք չունի, ինքը ամեն ինչ գիտի:

- Չե՞ք ասի, թե ինչին պիտի ուշադրություն դարձնի:

- Ես կարծում եմ, որ հիմա, այս պահին դիվանագիտական հարթության վրա չեն կարգավորվում հարցերը: Պիտի փորձել (բայց ես իրեն խորհուրդ չեմ տալիս, ընդհանրական եմ ասում) վերականգնել Հայաստանի դիրքերը: Էնպիսին, ինչպիսին էին 90-ականների առաջին կեսին, երբ Հայաստանը դիտվում էր որպես մեր տարածաշրջանի ամենաժողովրդավարական եւ ամենակայուն երկիրը: Եթե դա հնարավոր լինի անել, դրանից, բնականաբար, դիվանագետների դիրքերը կամրապնդվեն: Վերջին 10 տարիների ընթացքում իրականում տեղի է ունեցել հակառակը. Հայաստանը իր դիրքերը զիջել է բոլոր հարթություններում, հետեւաբար՝ նաեւ դիվանագիտական հարթությունում:



- Վերջին 10 տարվա բանակցային գործընթացում ոչ մի դրական արդյունք չկա՞:

- 10 տարվա բանակցությունները որեւէ արդյունք չեն տվել: Խոսում են փաստաթղթի մասին, որտեղ, իբր, ամրագրված է ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Բայց փաստաթուղթ չկա իրականում, կան առաջարկներ: Եւ այդ առաջարկների մեջ կա այդպիսի գաղափար, բայց ի՞նչ առաջարկների մասին է խոսքը՝ բոլորովին հստակեցված չէ: Որտե՞ղ է արվելու հանրաքվեն, ովքե՞ր են մասնակցելու այդ հանրաքվեին: Այնպես որ, հիմա դիվանագիտությունը չէ, որ պիտի գործի: Հիմա պետական ապարատը պիտի փորձի վերականգնել հասարակության միասնականությունը այնքանով, որքանով որ դա հնարավոր է: Եւ ակնկալել ինչ-որ արդյունք՝ ուղղակի միամտություն է:

- Իսկ բանակցությունների ձեւաչափի մասի՞ն ինչ կարծիք ունեք:

- Ընդհանրապես ակնկալել հարցի կարգավորում առանց Ղարաբաղի պատվիրակության, անհեթեթություն է: Ղարաբաղը ինքնուրույն քաղաքական միավոր է: Մի բան էլ ասեմ, որ կարող է փոքր-ինչ տարօրինակ հնչել, բայց դա այդպես է: Միշտ չէ, որ ՀՀ եւ ԼՂՀ շահերը համընկնում են: Սա պետք է նկատի ունենալ:

- Ներկա իրավիճակում ի՞նչ շահերի բախում կա ՀՀ եւ ԼՂՀ միջեւ:

- Ես այդ մասին հիմա չեմ խոսի: Բանակցություններն ընթանում են, եւ ճիշտ չի լինի, որ նախկին ԱԳ նախարարը խոսի այդ մասին:

- ԼՂՀ-ն ինչպե՞ս կարող է վերադառնալ բանակցային փուլ:

- Նորից վերադառնում ենք նույն գաղափարին. ՀՀ-ն պիտի լիներ այնքան ամուր, ինչպիսին 1994 թվականին էր. դեկտեմբերին կարողացավ պարտադրել, որ ԵԱՀԿ-ն որոշում ընդունի ԼՂՀ-ն բանակցությունների լիարժեք կողմ դարձնելու մասին: 1998 թվականից Ղարաբաղը դուրս մղվեց բանակցություններից: Հայաստանը այնքան պետք է ամրապնդի իր դիրքերը, որ Ղարաբաղին վերադարձնի բանակցությունների սեղանի շուրջ:

- Այդ մասին բարձրաձայնել են ԵԱՀԿ Մխ համանախագահները: Դուք բացառո՞ւմ եք, որ առաջիկայում հնարավոր կլինի ԼՂՀ-ն վերադարձնել բանակցային սեղանի շուրջ:

- Այո, ասում են, բայց Ադրբեջանն ասում է՝ չէ: Այն ժամանակ չէր կարողանում ասել՝ չէ:

- ԱԺ-ն վերջերս ընդունեց որոշում, ըստ որի՝ Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիայի կամ այլ բռնի միջոցների կիրառման դեպքում ՀՀ-ին հնարավորություն է տրվում ապահովել ԼՂՀ լիարժեք անվտանգությունը եւ պաշտպանությունը: Ի՞նչ է սա նշանակում:

- Հերթական պոպուլիզմ, որը իրական քաղաքականության հետ ոչ մի կապ չունի: Պարզ չէ՞, որ եթե Ղարաբաղում ռազմական գործողություններ վերսկսեն, այսպես թե այնպես, Հայաստանը պիտի ներգրավվի: Իսկ ի՞նչ է՝ 1992-1994 թվականներին, երբ պատերազմ էր, որեւէ փաստաթուղթ կա՞ր: Չէ՞ որ Հայաստանի կամավորներն էին կռվում ԼՂ-ում: Եռաբլուրը ի՞նչ է, դրա համար թո՞ւղթ է պետք:

- Հիմա պատերազմի վերսկսման իրական վտանգ կա՞:

- Վտանգ միշտ կա: Ցանկացած պահի, երբ Ադրբեջանը ինչ-որ չափով վստահ լինի, որ կարող է վերսկսել ռազմական գործողություններ, կանի: Կա միջազգային հանրության տեսակետը, ըստ որի՝ հարցը պետք է լուծվի միայն բանակցությունների ճանապարհով: Բայց միշտ չէ, որ տարածքներ կորցրած երկիրը պիտի հարցնի՝ սկսե՞մ պատերազմը, թե՞ չսկսեմ: Փորձեք Ձեզ դնել Ադրբեջանի տեղը: Ի՞նչ պիտի անեք, եթե 15 տարի բանակցություններ են ընթանում, եւ, ըստ էության, որեւէ արդյունք չկա: Եթե համարում ես, որ կորսվել են տարածքներդ, վաղ թե ուշ, պիտի փորձես այս կամ այն կերպ վերադարձնել:

- Իսկ ԼՂՀ ճանաչումը որքանո՞վ կօգնի հարցի հայանպաստ լուծմանը:

- Դա ոչինչ չի տա, բացարձակապես: Միայն կբարդացնի մեր դիրքը միջազգային հարաբերությունների տեսանկյունից:

- Դուք կարծում եք, որ հիմա՞ նպատակահարմար չէ ճանաչել ԼՂՀ անկախությունը:

- Երբեւէ նպատակահարմար չի լինի: ԼՂ ճանաչումը պետք է լինի այն բանից հետո, երբ միջազգային հանրությունը գա եզրակացության, որ ուրիշ ելք չկա: Միջազգային հանրությունն այդ դիրքորոշմանը դեռ չի եկել, ասում է՝ պետք է բանակցեք, գտնեք լուծումներ, որոնք ընդունելի կլինեն կողմերի համար:

- Պարոն Փափազյան, նոր ԱԳ նախարարի հետ հույսեր կապո՞ւմ եք:

- Նալբանդյանը գրագետ եւ պատրաստված դիվանագետ է, նա եղել է իմ աշխատակիցը, Եգիպտոսում մեր դեսպանն էր: Բայց այս դեպքում, վերադառնալով Ձեր առաջին հարցին, նորից եմ շեշտում՝ խնդիրը դիվանագիտությունը չէ, քաղաքականությունն է, այդ թվում՝ ներքին քաղաքականությունը: Այն, ինչ այսօր մենք տեսնում ենք Հայաստանում, որեւէ լավ բան չի կարող բերել Ղարաբաղի հարցում: